

31.12.2017թ.

Սևան համայնքի ղեկավար Սարգիս Մուրադյանի՝ Ամանորի շնորհավորանք-ուղերձը

Հարգելի համաքաղաքացիներ,

Սիրելի սևանցիներ

Կրկին տարեմուտ է, և մեզ ակնթարթներ են բաժանում նոր՝ 2018թ-ից: Պատմություն է դառնում ևս մեկ տարի՝ իր հետ տանելով աշխատանքում և կյանքում գրանցված մեր ձեռքբերումներն ու հաջողությունները:

Հավատացած եմ՝ անցնող տարին մեզանից յուրաքանչյուրի կյանքում առանձնացել է մնայուն էջերով և իրադարձություններով, որը նաև գալիք տարվա հաջող մեկնարկի նախապայմանն է:

Անցնող տարին թեև բարդ էր ու աշխատատար, սակայն արձանագրում ենք տեսանելի ձեռքբերումներ՝ համայնքապահպան ծրագրերի, արդյունավետ աշխատանքների տեսքով:

Այդ ամենի շնորհիվ Սևանն առաջ գնաց ևս մեկ քայլ, իսկ սևանցին իր կողքին զգաց տեղական իշխանության ներկայությունը, պատրաստակամ մոտեցումը: Ու այժմ կուտակած փորձով, համագործակցային հեռանկարներով, աշխատանքի լուրջ պաշարով, զարգացման ծրագրերով ոտք են դնում 2018թ.՝ կարևորելով յուրաքանչյուր քաղաքացու գործուն մասնակցությունը մեր համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման գործում:

Ծրագրերը քիչ չեն, անելիքները՝ ևս. դրանք կյանքի կոչելու և առաջ գնալու համար կա կամք և վճռականություն, և մեր գործունեության շղթայում են համայնքային կյանքի բոլոր ոլորտները՝ ենթակառուցվածքների բարելավումից մինչև սոցիալական քաղաքականության ոլորտ, ապակենտրոնացված համագործակցությունից մինչև համայնք-բնակիչ կապի ապահովում:

Այդ խնդիրների լուծման արդյունքում էլ ձևակերպվում է մեր կարևորագույն նպատակը՝ ունենալ զարգացած, կազմակերպված, հարմարավետ և ներկայանալի համայնք:

Այս տոնական պահին, երբ ի մի է բերվում արվածը, երբ ամփոփվում է անցնող տարին, ես շնորհակալություն եմ հայտնում այն կազմակերպություններին ու անհատներին, որոնք համայնքի կյանքում ունեցան իրենց ավանդն ու ներդրումը, իրենց գործելաոճով նպաստեցին մեր համայնքի զարգացմանը և տեղական իշխանության աշխատանքին:

Սիրելի համաքաղաքացիներ

Նոր հույսերով ու սպասումներով մոտենում ենք 2018-ին: Յուրաքանչյուր Ամանոր ազդարարում է մի նոր մեկնարկի մասին: Ուզում եմ՝ այդ մեկնարկը լինի հաջող ու խոստումնալից, և յուրաքանչյուրս տեր կանգնենք մեր ստեղծածին՝ դրանք ավելացնելով նոր տարում:

Լավագույն գործերը նրանք են, որոնք իրականանում են բարի կամքով և համատեղ ուժերով: Համախմբենք մեր ուժերն ու ցանկությունները՝ ի նպաստ և ի բարօրություն Սևանի ներկայի և ապագայի:

Քաղաքական, սոցիալ-տնտեսական զարգացումները փաստում են՝ Սևանին սպասվում է խոստումնալից ապագա, սևանցուն լուրջ ձեռքբերումներ, որոնք իրողություն են դառնալու նաև համայնքի ղեկավար-ավագանի-համայնք-բնակիչ միասնական և համատեղ աշխատանքի շնորհիվ և փոխադարձ վստահության պայմաններում:

Երկիրն ուժեղ է կայացած համայնքների շնորհիվ. միասին մենք կարող ենք Սևանը դարձնել մեր երազանքների քաղաքը և այդ ուժը ապահովող երակներից մեկը:

Հարգելի սևանցիներ

Ցանկանում եմ, որ գալիք՝ 2018թ. դիմավորեք լավատեսական տրամադրությամբ ու նորի ակնկալիքով, թող անսպառ լինեն խինդն ու բարիքը: Ցանկանում եմ, որ Սևանը հանրապետությունում և նրա սահմաններից դուրս լինի ներկայանալի, իսկ սևանցին իր քաղաքում տեսնի իր ապագան:

Տոնական այս պահին առանձնահատուկ շնորհավորում եմ նորաստեղծ ընտանիքներին, այն ընտանիքներին, որոնց հարկի տակ տարին իմաստավորվեց մանկան ծնունդով, շնորհավորում եմ այն ընտանիքներին, որոնց զավակներն այս օրերին հսկում են Հայաստանի և Արցախի սահմանները, ապահովում են մեր խաղաղությունն ու անվտանգությունը: Նրանց՝ անվտանգ ծառայություն և բարի վերադարձ:

Սիրելի համաքաղաքացիներ

Ամանորի բարեմաղթանքներս եմ հղում բոլորիդ՝ մաղթելով առողջություն, երկարակեցություն, բարեկեցություն, աշխատանքային ու անձնական հաջողություններ, արժանապատիվ ու երջանիկ կյանք, հավատ ապագային նկատմամբ և խաղաղություն:

Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ: